

891.715

S-80

956
L. ՏՈԼԱԶՈՅ

ՅԵՐԵՒԱ

ԱՐԴԻ ՀԵՐԿՈՎԸ




L. S O L U S O 3

30 MAY 2011

891-715 4
S-80

ՅԵՐԵՒ ԱՐՁԻ ՀԵՖԻԱԹԸ

ՓՈՒՇԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ



1077
37

Մի աղջիկ ել լինում։ Ես աղջիկը մի անգամ դուրս
ե գալիս իրենց տնից և գնում բնկնում անտառը։ Անտա-
ռում մոլորպում ե. ճամփի յե ման գալիս, ճամփա չի
գտնում ու գալիս ե զեմ առնում մի տնակի։





Դուռը բաց ե լինում։ Նայում ե, տեսնում ե տանը
վոչ-վոք չկա։

Ներս ե մտնում։ Դու մի ասիլ՝ ես տնակում յերեք
արջ են ապրում—հերը, մերը և իրենց քոթոթը։ Եղ ժա-
մանակ գնացած են լինում անտառը ման գալու։ Տնակն
ունենում ե յերկու սենյակ, մինը սեղանատուն, մյուսը
ննջարան։

Ես աղջիկը սեղանատունն ե մտնում, տեսնում ե
ոեղանի վրա դրած յերեք աման ապուր։ Առաջինը, հոր
ամանը մեծ ե լինում, յերկրորդը, մոր ամանը՝ միջակ,
յերրորդը, քոթոթի ամանը՝ փոքրիկ։ Ամեն մի ամանի
մոտ ել մի-մի գդալ ե լինում դրած—մեծ, միջակ ու
փոքր։

Աղջիկն առնում ե մեծ գդալը, ուտում մեծ ամանից,
անհամ ե լինում։

Հետո վերցնում ե միջակ գդալը, ուտում ե միջակ
ամանից, դուր չի գալիս։

Հետո վերցնում ե փոքր գդալը, ուտում ե փոքր ա-
մանից։ Տեսնում ե փոքր ամանի ապուրը համով ե։

Ուզում ե նստի, տեսնում ե յերեք աթոռ՝ մինը
մեծ, մյուսը միջակ, յերրորդը փոքր։ Բարձրանում ե



մեծ աթոռին, վեր ե ընկնում։ Նստում ե միջակ աթոռին, տեսնում ե անհարմար ե։ Նստում ե փոքր աթոռին, քեֆը գալիս ե, ենքան լավն ե լինում։ Վերցնում ե փոքր ամանը, դնում ե ծնկներին ու սկսում ե փոքր գղալով ուտել։

Ուտում ե կշտանում և սկսում ե որորվել աթոռի վրա։

Աթոռը կոտրվում ե, աղջիկը վեր ե ընկնում։
Վեր ե կենում, աթոռը բարձրացնում ու մտնում
մյուս սենյակը։

Մյուս սենյակում յերեք մահճակալ ե լինում — մինը
մեծ, մյուսը միջակ, յերրորդը փոքր։

Պառկում ե մեծ մահճակալի վրա, տեսնում ե շատ
ե լեն։ Միջակի վրա յե պառկում՝ տեսնում ե շատ ե
բարձր։ Փոքրի վրա յե պառկում, տեսնում ե հենց իրենն
ե վոր կա ու քնում ե։

Արջերը քաղցած գալիս են, վոր ճաշեն։ Հերը մո-
տենում ե իր ամանին, մտիկ անում ու զարհուրելի
գոռում։


— Ես ով ե կերել իմ ամանից։

Մերը մտիկ ե անում իր ամանին ու փնթփնթում։



— Ես ով ե կերել իմ ամանից:
Քոթոթն ել, վոր տեսնում ե իր դատարկ ամանը,
Ճմրում ե.
— Ես ով ե կերել իմ ապուրը:
Հերը նայում ե իր աթոռին ու փնթփնթում.
— Ես ով ե նստել իմ աթոռին ու տեղից շարժել
Մերն ե նայում իր աթոռին ու փնթփնթում.
— Ես ով ե նստել իմ աթոռին ու տեղից շարժել:
Քոթոթը նայում ե իր կոտրած աթոռին ու ճմրում ե.
— Ես ով ե նստել իմ աթոռին ու կոտրել:
Մտնում են մյուս սենյակը:
Հերը նայում ե իր մահճակալին ու զարհուրելի գոռում.
— Ես ով ե պառկել իմ անկողնին ու տրորել:
Մերը նայում ե իր մահճակալին ու փնթփնթում.
— Ես ով ե պառկել իմ անկողնին ու տրորել:
Քոթոթն ել նայում ե իր անկողնին ու ճմրում.
— Ես ով ե պառկել իմ անկողնում:
Հանկարծ աղջիկը նկատում ե ու ենպես ճղղում,
կարծես թե մորթում են իրեն:
— Ես ով ե... Գտել եմ... Հրես... Բոնեցեք... Վայ...
Վայ... Բոնեցեք:

Ցեվ ուզում ե աղջկանը կծի: Աղջիկը վախից վեր և
թռչում, աչքերը բաց անում, տեսնում է պառկած ե ի-
րենց տանը, իր ննջարանում: Ու ես բոլորը յերազ ե
յեղել:



Խմբագիր՝ Ա. Հալքյան, տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան,
Սրբագրիչ՝ Հ. Դոլուխանյան, Գլավլիտի լիազոր Կ.—296
Հրատ. 3563, պատվեր 829, տիրաժ 5000
Պետհրատի տպարան, Յերևան, Ա Գնունի, 4





ЛЕВ ТОЛСТОЙ
ТРИ МЕДВЕДЯ

Гиз ССР Армении, Ереван, 1936 г.

«Ազգային գրադարան»
NL0386885

5377